

մեծ թիւ մը կար, եւ անոնք իրարու այնքան մօտ էին, որ իրենց լոյսերը շփոթեցուցիչ էին իրրեւ թէ մէկ հատ մը միայն ըլլային: Պարտէզին մէջ կար նաեւ մեծ թիւ մը ջահերու եւ մոմերու, որոնք նոյն տպաւորութիւնը կը ձգէին:

«Մեծ նեղութեամբ եւ քաղաքավարութեամբ հրաժեշտ առած ըլլալով հանդերձ, որեւէ կերպով չի կրցանք երկրորդ եղբայրը համոզել, որ մեզ հետ մեր բնակարանը ընկերանալու մտադրութենէն ետ կենայ, ուր ան կրցաւ խմցնել Ազուալիթայ եւ Ռօզ Սօլիս (երկուքն ալ թունդ խմիչքներ) ու կատարելապէս գինովցնել: Եւ այսպէս աւարտեցաւ օրը: Ես պէտք է խոստովանիմ ամենահաճելի օրերէն մին էր, որ վայելած ըլլայինք մեր բոլոր ճամբորդութեան ընթացքին, աւելի լաւ վերաբերուած ըլլալով, քան ինչ որ Թաւաւորին իսկ վերաբերումն էր»: (45)

Փոխաբէն այս մեծաշունդ եւ բազմաճախ արքայապալա խնճոյքին, 1637 «Հոկտեմբեր 1-ին, զեսպանները մեծ խնճոյք մը սարքեցին, որուն հրաւիրուած էին Մոսկովիներուն զեսպանը, Հայերուն Կառավարիչը (իմա Սարֆրազ Պէկ), եւ իր երկու եղբայրները, Անգլիացի եւ Ֆրանսացի վաճառականներուն գլխաւորները, Սուրբ Օդոստինեան կարգի Սպանիացի վանականները եւ ինչ որ Կարմեղիան Իտալացիներ: Չանոնք հիւրասիրեցին, ըստ Գերմանական կերպին, երեք տարբեր ճաշերով, իւրաքանչիւրը բազկացած քառասուն կերակուրներէ: Նուազը կը բազկանար ջութակներէ, փողերէ, եւ թմբիկներէ, որոնք լաւ ազմուկ հանեցին, ինչպէս որ ըրաւ նաեւ մեր թնդանօթը, երբ որեւէ իշխանի կենաց կը խմուէր:

«Հայոց Իշխանը ամէն բանէ աւելի գըրաւուեցաւ ինչ որ քաղցր խմորեղէններէ, պատրաստուած Գերմանական կերպով, որոնք սեղան բերուած էին աւելի աչք պարուրելու քան թէ խորթակ սրելու համար, եւ ան (Սարֆրազ Պէկ) գանոնք այնքան լաւ գտաւ, որ անոնց մասին (Շահին) արքունի-

քը խօսած էր, եւ թաղաւորը ուզեց ատոնցմէ տեսնել: Այդ պատահելուն պէս զեսպանները հրամայեցին մեր խոհարարարին ատոնցմէ պատրաստել, ինչպէս նաեւ Ֆլորէնսական եւ ուրիշ տեսակ խմորեղէնի կտորներ, որոնք աղնրուութեամբ նուիրեց՝ հրամցնելով արքունեաց քանի մը տիկիններուն, որոնք զանոնք առաջնակարգ համեղ գտան»: (46)

Նոյն հեղինակը իր շատ ընդարձակ եւ շատ հետաքրքրական ուղեգրութեան մէջ կը պատմէ, թէ Հոկտեմբեր 3, 1637-ին Գերման ժամագործ մը, որ Շահին ծառայութեան մէջ կը գտնուէր, ծնած էր Յուրիխ (Չուրցերիա) եւ կը կոչուէր ձան Ռօտօլֆ Սդաուլըր, կը բնտարկուի եւ հուսկ մահուան կը մատնուի Պարսիկներէն: Հոկտեմբեր 22-ին տեղի կ'ունենայ թագման արարողութիւնը, որուն ներկայ կ'ըլլան, «Մոսկովիներու զեսպանը, Հայոց Կառավարիչը (Սարֆրազ Պէկ) եւ իր եղբայրները, հայոց մեծ մասը, եւ անոնք, որ Նեստորականներու ազանդին կը պատկանէին, որոնցմէ էր մեծնողին կինը, յարգեցին իր թագումը իրենց ներկայութեամբ»: (47)

Հոկտեմբեր 17-ին Շահը որսի կը հրաւիրէ զեսպանները, որոնք կ'առաջնորդուին բռնապաղթ եղած Հայոց երկու գիւղերը՝ Դիլգակ եւ Վարանդայ: Հոս իրենց կ'այցեցին «Սարֆրազ Պէկ եւ ուրիշ իշխաններ, զուարճանալու եւ անոնց հետ խնճոյքի մը մասնակցելու համար: Անոնք իրենց հետ բերին Պարսիկներէն ահռ կոչուած զոյգ մը եղջերուազգիներ եւ նապաստակներ, որոնք մենք Սպահան գրկեցինք»: (48)

Նոյեմբեր «29-ին երկու եղբայրները, Սարֆրազ եւ Էլազ Պէկ, եկան զեսպաններուն այցելութիւն տալու: Դեսպանները ստիպեցին զանոնք ճաշի մնալ: Էլիազ Պէկ ամէն բան ըրաւ ուրախ ըլլալու եւ ուրիշներ զուարճացնելու համար: Սակայն մենք հեշտութեամբ գտանք որ բռնազրօսիկ էր կատարուածը, թէ իր սիրտը իր արտաքին ընթացքին համաձայն չէր: Ասոր պատճառը իր եղբորմէն իմացանք, որ ը-

(46) Անդ էջ 278:

(47) Անդ էջ 281:

(48) Անդ էջ 282:

(45) Voyages and Travels of the Ambassadors, London, 1662, p. 275-277: